«Գրանցված է»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
«24» մայիսի 2013 թ.
Պետական գրանցման համարը 1041366
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«13» մայիսի 2013թ. N 57-Ն

ք. Ստեփանակերտ

ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻՑ ՆՎԱԶԵՑՎՈՂ ՄՍԻ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՍՏԻ (ԲՆԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ) ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 26-ի N 245 որոշումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող մսի փաստացի կորստի (բնական կորստի) չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետին՝

1) սույն հրամանի 1-ին կետով սահմանված չափերը եռօրյա ժամկետում ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն՝ համաձայնեցման.

2) սույն հրամանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական

գրանցման:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Բաղդասարյանին:

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Համաձայնեցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարությանն առընթեր հարկային
պետական ծառայության պետ
_____ Ա. ԲԱԼԱՅԱՆ
16 մայիսի 2013թ.

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի
2013 թվականի մայիսի 13-ի
N 57-Ն հրամանի

Չ Ա Փ Ե Ր
ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻՑ ՆՎԱՋԵՑՎՈՂ ՄՍԻ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՍՏԻ (ԲՆԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն նորմատիվ իրավական ակտը սահմանում է մսի պահպանման ընթացքում առաջացող բնական կորուստների թույլատրելի սահմանային չափերը:

2. Մսի պահպանման ընթացքում առաջացող բնական կորուստները հետևանք են դրանցում ընթացող ֆիզիկաքիմիական պրոցեսների և օդերևութաբանական գործոնների ազդեցության, տրանսպորտային միջոցների օգտագործման, ինչպես նաև պահպանման ժամանակ դրանց որակական ու քանակական պարամետրերի փոփոխություններից (պակասորդից) առաջացած կորուստների:

3. Բնական կորուստներին չեն դասվում մսի պահպանման ընթացքում ստանդարտների, տեխնիկական պայմանների, տեխնիկական շահագործման և պահպանման կանոնների, ինչպես նաև տեխնոլոգիական պահանջների խախտման հետևանքով առաջացած կորուստները:

II. ՄՍԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑՈՂ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՍՏԻ (ԲՆԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ) ՉԱՓԵՐԸ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ)

4. Սպանդից անմիջապես հետո բնական պաղեցման կամ սառնարանում մինչև չորս աստիճան սառեցման ժամանակահատվածում մսի պահպանման բնական կորուստների չափերը կազմում են՝

1) տավարի միսը (երկատված, քառատակված կամ մասնատված մսեղիքով)՝ 1,6%.

2) ոչխարի և այծի միսը (ամբողջական կամ երկատված մսեղիքով)՝ 1,7%.

3) խոզի միսը (ամբողջական կամ երկատված մսեղիքով, խոճկոր)՝ 1,5%.

4) թռչնի միսը (հավ, հնդկահավ, սագ, բադ ամբողջական մսեղիքով)՝ 1,0%:

5. Սառեցված միսը սառնարանում պահպանելիս բնական կորուստների չափերը կազմում են՝

1) տավարի միսը (երկատված, քառատակված կամ մասնատված մսեղիքով)՝ 0,55%.

2) ոչխարի և այծի միսը (ամբողջական կամ երկատված մսեղիքով) 0,65%.

3) խոզի միսը (ամբողջական կամ երկատված մսեղիքով, խոճկոր)՝ 0,35%.

4) թռչնի միսը (հավ, հնդկահավ, սագ, բադ՝ ամբողջական մսեղիքով)՝ 0,30%: